

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԵՂ ՀՊԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պատմահամեմատական հայերենագիտությունը, որպես կանոն, բավարարվել է՝ նշելով, թե ինչ համապատասխանություններ են դրսևորվել հ.-ե. նախալեզվի և հայերենի հնչույթային համակարգերի միջև, որովհետև քննությունը գերազանցապես իրականացվել է համեմատական հայեցակետով¹: Այդ աշխատանքներում պատմական հայեցակետի կիրառումն ունի դրվագային բնույթ՝ միայն առանձին երևույթների առնչությամբ: Բուն պատմական (տարածամանակյա) հայեցակետի կիրառումը, հնչույթային համապատասխանությունները սահմանելուց բացի, ենթադրում է նաև համակարգային մոտեցման հիման վրա ցույց տալ, թե համապատասխանությունների շարքից հատկապես որը կարող էր լինել հայերենի հնչույթի բուն նախաձևը, և փոփոխությունների ինչպիսի հոլովույթ է ունեցել հայերենի տվյալ հնչույթը մինչև գրային փուլին հասնելը: Նշված առումներով առանձնանում է Յու. Գաբրիելյանի «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» ուսումնասիրությունը, որի մի ստվար մասը նվիրված է հայերենի պատմական հնչույթաբանության հարցերին²:

Հին հայերենի ձայնեղ հպականների տարածամանակյա բնութագրերի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն, մասնավորապես՝ 1) հպականների հնդեվրոպական և հայկական համակարգերի առնչությունների և 2) հայերենի հպականների օրինաչափական և ոչ օրինա-

¹ Տե՛ս **Հայնրիխ Հյուբշման**, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում // **Նույնի**՝ Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1990, էջ 60-75, **Ա. Մեյե**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 48-67, **Ա. Meillet**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 25-38, **Հովգեր Պեդերսոն**, Նպաստ մը հայ. լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 1-24, **Նույնի**՝ Հայերէն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 7-14, 82-84, **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 6, Եր., 1971, էջ 516-555, **Հրաչյա Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 595-599, **Գ. Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, էջ 230-238, **Գ. Բ. Джаукян**. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ер., 1967, էջ 82-210, **Նույնի**՝ Сравнительная грамматика армянского языка. Ер., 1982, էջ 32-76, **Кортланд Ф.** Праиндоевропейские глоттализованные смычные // "Вопросы языкознания" (այսուհետև՝ ВЯ), 1985, № 4, էջ 45-48:

² Տե՛ս **Յու. Գաբրիելյան**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 46-126:

չափական (= համակարգային և ոչ համակարգային) նախաձևերի տարբերակման հարցերը:

Հին հայերենի հպական բաղաձայնների համար մենք ելակետային ենք համարում ընդհանուր հնդեվրոպականում հպականների երկկարգ, այն է՝ $*B^{(h)}$, $*G^{(h)}$, $*D^{(h)}$ ձայնեղ և $*P^{(h)}$, $*K^{(h)}$, $*T^{(h)}$ խուլ հնչույթային կարգերով ներկայացված համակարգը, որի բաղադրիչներից յուրաքանչյուրն ունի շնչեղ և ոչ շնչեղ դիրքային տարբերակներ ենթահնչույթներ (հմմտ. $*B^{(h)} \equiv \{ *b^h/b \}$ ³, $*G^{(h)} \equiv \{ *g^h/g \}$, $*D^{(h)} \equiv \{ *d^h/d \}$ և $*P^{(h)} \equiv \{ *p^h/p \}$, $*K^{(h)} \equiv \{ *k^h/k \}$, $*T^{(h)} \equiv \{ *t^h/t \}$)⁴: Քանի որ այդ հայեցակարգով հայերենի բնիկ, այն է՝ հնդեվրոպական ծագման արմատների (բառերի) համար նախաձևեր չեն վերականգնվել, հ.-ե. հպականների ամենից մոտ հայեցակարգը, որը կարող է հիմք ընդունվել *նախալեզու* → *հայերեն* հնչույթային համապատասխանությունների համար՝ առանց մեր պատկերացումների հետ սկզբունքային հակասություններ առաջացնելու, քառաբաղադրիչն է՝ այն վերապահումով, որ, օրինակ, $*b^h$ -ն և $*b$ -ն պիտի դիտել մեկ հնչույթի՝ $\langle *B^{(h)} \rangle$ -ի դիրքային տարբերակներ, $*p^h$ -ն և $*p$ -ն՝ $\langle *P^{(h)} \rangle$ -ի դիրքային տարբերակներ են: Ուստի, ինչպես այլ դեպքերում⁵, այս անգամ ևս հ.-ե. նախաձևերի հարցում մենք հիմք կընդունենք Գ. Ջահուկյանի կազմած բառացանկը⁶, ըստ որի՝ առկա են ձայնեղ հպականների ընդհանուր հնդեվրոպական լեզու-հին հայերեն հետևյալ համապատասխանությունները.

Ա) $*b^h > p$ (86), $*b^{(h)} > p$ (2)⁷, $*p > p$ (2),

Բ) $*d^h > \eta$ (59), $*t > \eta$ (16), $*g^h > \eta$ (1), $*d > \eta$ (1), $*t // *d^h > \eta$ (1),

³ ≡ -ը համարժեքության նշանն է, դիցուք՝ $*B^{(h)}$ -ը խորհրդանշում է $\{ *b^h/b \}$ -ն:

⁴ Տե՛ս **Վարդան Պետրոսյան**, Հպական բաղաձայնների հնդեվրոպական և հայկական համակարգերը // Հայագիտության հարցեր, Եր., 2014, № 2, էջ 121-139:

⁵ Տե՛ս **Վարդան Պետրոսյան**, Հին հայերենի $z(\gamma)$ ձայնորդի համաժամանակյա և տարաժամանակյա բնութագրերը // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Եր., 2017, № 3, էջ 11-22, **նույնի**՝ Հին հայերենի p (r), n (r) նայականների և u (m), \acute{e} (n) ռնգայինների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // Հայագիտության հարցեր, № 1, 2018, էջ 140-152:

⁶ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԼԺ), Եր., 1987, էջ 111-157: Այս բառացանկը գերագանցապես հիմնված է Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանական բառարանի» և Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» վրա՝ ներառելով նաև դրանցից հետո կատարված ստուգաբանությունները, մասնավորապես՝ հեղինակի: Ճիշտ է, հայ ստուգաբանական միտքը չի մնացել Գ. Ջահուկյանի վերոհիշյալ աշխատության մեջ տեղ գտած նվաճումների տիրույթում, հայերենի բառապաշարի ստուգաբանական քննությունը շարունակվել է նաև դրանից հետո (Ն. Սիմոնյան, Վ. Համբարձումյան, Հրաչ Մարտիրոսյան և ուրիշներ), բայց ներկա աշխատանքի տեսանկյունից այդ հարցը առաջնային կարևորություն չունի, որովհետև մեր հիմնական խնդիրը հին հայերենի պատմական հնչույթաբանության, այլ ոչ թե՛ համեմատաբանական և մասնավորապես՝ ստուգաբանական հարցերի քննությունն է: Իսկ մեր հետապնդած նպատակի տեսանկյունից Գ. Ջահուկյանի կազմած բառացանկը լիովին բավարարում է:

⁷ Ըստ էության, $*b^h$ -ը և $*b^{(h)}$ -ը նույնական են, հետևաբար՝ $*b^h > p$ համապատասխանությունների քանակն է 88:

Գ) * $\mu > q$ (71), * $g^h > q$ (20), * $g^h h > q$ (6), * $k > q$ (3), * $k^h > q$ (5), * $g > q$ (2)⁸:

Ինչպես երևում է նշված թվերից, դրանց քանակական ընդգրկումները համարժեք չեն: 1) Հանդիպելիության բարձր հաճախականություն ունեն առաջին տեղերում գտնվողները (հմմտ. * $b^h > p$ (86), * $\mu > q$ - 71, * $d^h > \eta$ - 59): Տրամաբանական է, որ համարժեքության բարձր գործակից ունեցող նախաձևերը դիտվեն օրինաչափական (= համակարգային), իսկ մյուսները՝ ոչ օրինաչափական (= ոչ համակարգային), թեպետև տեսականորեն չի բացառվում, որ հայերենի ինքնուրույն պատմության ընթացքում, օր.՝ *վաղնջահայերենի* (մ.թ.ա. III հազարամյակ-մ.թ.ա. XIII դար) կամ *հնագույն հայերենի* (մ.թ.ա. XII դար-մ.թ. IV դար)⁹ փոխվում ենթաշերտային (լայն առումով) ուժեղ միջամտության կամ մեկ այլ պատճառով այդ սկզբունքը կարող էր խախտվել: 2) Որքան էլ որ ծագումնաբանական տվյալները կարևոր են քանակական գերակշռության սկզբունքը որպես օրինաչափականության ցուցանիշ ընդունելու հարցում, երկրորդական չէ նաև տիպաբանական տվյալների, այն է՝ ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառությունների նշանակությունը: 3) Եթե նկատի ունենանք բոլոր համապատասխանությունները, այլ ոչ թե միայն բարձր հաճախականություն ունեցողները, ապա «տեղաշարժի» սկզբունքին խիստ վերապահումով պիտի վերաբերվել ոչ միայն այն պատճառով, որ ընդհանուրինդեվրոպական լեզվում հպականների՝ մեր կողմից ընդունված երկկարգ հայեցակարգն ինքնին չի ենթադրում «տեղաշարժ», այլև այն պատճառով, որ «տեղաշարժի» սկզբունքով ենթադրելի օրինաչափական նախաձևի փոխարեն երբեմն առկա է այլ հնչույթ, ինչպես * $\mu > q$ (71)¹⁰, փոխանակ * $g^h > q$ (20), բ) գործել է նաև հակառակ միտումը, այսինքն՝ ոչ միայն

⁸ Նշված հնչույթային համապատասխանություններին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը (տե՛ս Գ. Բ. *Джаукян*. Очерки ... , էջ 273-292, նույնի՝ Сравнительная грамматика ... , էջ 45-54): Առանձին տարբերությունները, որ կարելի է տեսնել մեր և անվանի գիտնականի կողմից նշված համապատասխանությունների միջև, ըստ իս, պայմանավորված են հետևյալ հանգամանքներով. 1) եթե մեր ելակետը հայերենի հնչույթն է, ապա Գ. Ջահուկյանի համար այդպիսին եղել է հ.-ե. նախաձևը. 2) Գ. Ջահուկյանը առաջնորդվել է ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված բաղաձայնական տեղաշարժի սկզբունքով, ըստ որի՝ հայերենի հպականների և հպաշփականների համակարգը հ.-ե.-ի համեմատությամբ ենթարկվել է տեղաշարժի, ինչպես և գերմաներենի հպականների համակարգը, այսինքն՝ մեկ աստիճանով հեռացել է հ.-ե.-ից, այնինչ, մեր կարծիքով, այդպիսի տեղաշարժ չի եղել (տե՛ս **Վարդան Պետրոսյան**, Հպական բաղաձայնների հնդեվրոպական և հայկական համակարգերը). 3) հայերենի հպականների եռակարգ համակարգը քննելիս Գ. Ջահուկյանն առաջնորդվել է հ.-ե. հպականների քառակարգ հայեցակարգով, իսկ մենք առաջադրել ենք հ.-ե. հպականների երկկարգ հայեցակարգի տարբերակման գաղափարը (տե՛ս նույն տեղը): Ուստի նրա կազմած աղյուսակներում տեղ գտած այնպիսի համապատասխանություններ, ինչպիսիք են, օրինակ, * $g^h > p$, * $\mu > p$ (տե՛ս Գ. Բ. *Джаукян*, Очерки ... , էջ 299), բնական է, որ չհանդիպեն մեր ցանկերում:

⁹ Տե՛ս Գ. Բ. **Ջահուկյան**, *ՀԼՊՆԾ*, էջ 25:

¹⁰ Հմմտ... «... *q*-ն ոչ այլ ինչ կարող է ներկայացնել, եթե ոչ մի հին *w*» (**Աստուան Մեյե**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 45):

*b>պ(p), *d>տ(t), այլն՝ *p>բ(b), *t>դ(d) և այլն¹¹: Ընդ որում, եթե, օրինակ, *p>բ համապատասխանությունը ներառում է միայն 2 բառարմատ (հմմտ. *sլթ->աղբ, *տլթ->թարբ / (թարփ)), ապա *t>դ-ն ներառում է 16 բառարմատ (հմմտ. *mլթ->մարդ, -ոյ, *portijos>որդի, -ույ, *(l)ieկլթ->լեարդ ևն), որն արդեն բավականին բարձր ցուցանիշ է: Իհարկե, նշված հարցերում մեծ նշանակություն ունի նաև ստուգաբանությունների ճշգրտությունը: Կասկածելի ստուգաբանությունը կարող է թուլացնել եզրակացությունների հիմքերը: Համեմատության համար կարելի է նկատի ունենալ համապատասխանությունների հետևյալ շարքերը.

***b^h>բ** (հմմտ. *aB^(h)-ro-/[*abh-ro-]¹²>արբուն-ք, *B^(h)ā-n-/[*bhā-n-]>բանամ, *B^(h)ṛ-ti-/[*bhr-ti-]>բարդ,-ի, *B^(h)ṛu-g-/[*bhṛu-g-]>երբուծ, *k'u-B^(h)-ro-/[*k'u-bh-ro-]>սուրբ,-ոյ, *orB^(h)o-/[*orbho-]>որբ ևն),

***p>բ** (հմմտ. *sլթ^(h)- /[*sլթ-]>աղբ, *տլթ-P^(h)-/[*տլթ-p-]>թարբ / (թարփ)),

***d^h>դ** (հմմտ. *au-D^(h)-/[*au-dh-]>աւդ,-ոյ «օր», *D^(h)abh-rino-/[*dhabh-rino-]>դարբ-ին, *D^(h)el-/[*dhel-]>դեղ «բուժիչ խոտաբույս», *D^(h)ēses/[*dhēses]>դիք «աստված(ներ)», *lenD^(h)ā/[*lendhā]>լինդ ևն),

***t>դ** (հմմտ. *mլթ-T^(h)o-/[*mլթ-to-]>մարդ,-ոյ, *porT^(h)iios/[*portijos]>որդի,-ույ, *(l)ieկլթT^(h)- / [**(l)ieկլթ-]>լեարդ ևն),

***u>զ** (հմմտ. *uլթji- ?>(զ)գայո, -իմ, *ou->ագանիմ, *nēu->նիգ, *reu->արեզ(ն), *uoid->զիտ-եմ, *uēro->զիր ևն),

***g^h>զ** (հմմտ. *G^(h)oghe-/[*ghoghe-]>գոգեմ «1.փոս գցել, 2. գրկել», *G^(h)el-/[*ghel-]>զեղ-աւն, *meiG^(h)ā-/[*meighā-]>մեզ, -աց, *(s)mouG^(h)o-/[*(s)mougho-]>(մոյզ >) մուզ ևն):

Վերոհիշյալ հնչույթային համապատասխանությունների առնչությամբ առաջնային կարևորություն են ստանում տիպաբանական տվյալները, թե որքանով են դրանք հաստատում ծագումնաբանական առնչությունների վերը նշված հարաբերակցությունը: Ըստ այդմ հնչույթների հիմնական նախաձևերը որոշելու հարցում էական նշանակություն ունի ինչպես ցեղակից, այնպես էլ ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառությունների արտացոլումը հայերենում: Այսպես:

Ուրարտերեն > հայերեն. b>բ (baba «լեռ, սար»-բաբայ «բուր», burgana – բուրգն, Abiliani – Աբեղեանք), g > գ (հմմտ. Giarniani – Գարնի, garini «բերդ, ամրոց», burgana – բուրգն), u > զ (հմմտ. Uelikuni-Քեղա(ր)քունի, ueli «ջոկատ (?), հավաք (?), աշխարհագր (?)) – զեղ-, զեւղ»¹³:

¹¹ Թերևս նույն երևույթը նկատի ունի Գ. Ջահուկյանը, երբ «բաղաձայնների տեղաշարժ» տերմինին վերագրում է պայմանական բնույթ (տե՛ս Գ. Բ. Джаукян, Сравнительная грамматика ..., էջ 45):

¹² Մնկյունավոր փակագծերում [], տրվում են նախաձևերն ըստ Գևորգ Ջահուկյան, ՀԼՊՆԺ գրքի:

¹³ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 427-445:

Մեմֆական լեզուներ > հայերեն. b > p (հմմտ. ակկադ. (բար.) *ba*'u(m), *ba*'āru «բռնել, որսալ» - հյ. քերել (< h.-ե. *B^(hl)er-), արար. 'u**bl** - հյ. բող, բողբոջ (< h.-ե. *B^(hl)el-), ակկադ. *Bel*- հյ. *Բլ*, արար. *balasān* - բալասան, արամ., ասոր. *bāsīr* - բասիր (բասրել) «.....», նն), *g > q* (հմմտ. եբր. *gulgōlet*- հյ. զուլիս (< h.-ե. *ghel-), ակկադ. *ugaru*(m) (< շում. *agar* «դաշտ, արտ») - հյ. ագարակ, արամ., ասոր. *galūtā* - գաղութ նն), *d > η(?)* (հմմտ. ակկադ. *duḡ/kdumu* - դդում (?), արար. *da*'va - դավի «վեճ», արամ., ասոր. *dār(ā)* - դար նն):

Իրանական լեզուներ > հայերեն. b > p (հմմտ. *bāzūk*>բազուկ «թև», *barz/barj*> բարձ, *biž* (պրսկ. *bij*)>բիժ «աչքի ճպուռ»), *g>q* (հմմտ. **gāh(u)*- (ալ. *gātu*-)>գահ (-ն), *gōmēš* (մ. պ., պ. *gāvmēš*) >գումեշ նն), *d>η* (հմմտ. *dāt*> դատ, *dašn*>դաշն, *dēv* (ալ. *daēva*-)>դեվ):

Քարթվելական լեզուներ > հայերեն. b>p (հմմտ. վրգ. *baḱi* «ցանկապատ, փարախ»- հյ. բակ, վրգ. *bozi* «բոզ, պոռնիկ» (հմմտ. ճան. *bozo* «աղջիկ») - հյ. բոզ), *g>q* (հմմտ. վրգ. *gvāri*, ծովաթուշ. *gor* «ցեղ, ընտանիք» - հյ. գաւառ, վրգ. *guthani*, ծովաթուշ. *gutha* - հյ. գուլթան), *d>η* (հմմտ. վրգ. *gaḏa* - հյ. գդակ)¹⁴:

Հունարեն > հայերեն. β>p (հմմտ. *βαλανεῖν*-բալանիք, *βάρβαρος*-բարբարոս, *βήμα*-բեմ (-ի) «ամբիոն»), *γ>q* (հմմտ. *γαλεάγρος*-գառազիդ «գազանի վանդակ», *ποδαγρός*-պատազրոս «ոտքերի հողացավ ունեցող»), *δ>η* (հմմտ. *δάφνη*-դափնի (դափնե) «դափնի», *δίστεγον*-դստիկոն «տան հարկ», *νάσος*- նարշոս «մի տեսակ ծաղիկ»):

Լատիներեն > հայերեն. b>p (հմմտ. *basterna*>բաստեռն «գահավորակ»), *g>q* (հմմտ. *margarita* - մարգարիտ)¹⁵:

Իհարկե, ասվածը չի նշանակում, թե հայերենի ձայնեղ հպականները նշված լեզուների հետ չունեն հնչույթային այլ համապատասխանություններ: Այդպիսիք նույնպես կան (հմմտ. ուրարտ. *b >* հյ. *z*` *abili*-աւելի, ակկադ. *d >* հյ. *ṣ*` *ḏāritu*(m)-տարի, ասոր. *b >* հյ. *z*` *ḥašib*-հաշիւ նն), բայց դրանք ներառում են սակավաթիվ օրինակներ, այն էլ՝ ոչ բոլոր լեզուներում: Հետևաբար՝ օրինաչափական են վերը նշված համապատասխանությունները:

Բառապաշարային, հետևաբար նաև հնչույթային ամենից հին գուգադիպումները հայերենը կարող էր ունենալ խեթալուվական լեզուների հետ, նախ, որովհետև այդ լեզուներով պահպանված գրավոր հու-

¹⁴ Քարթվ. *g* - հյ. *q*, քարթվ. *d* - հյ. *η* համապատասխանությունների օրինակներն ըստ Ն. Աճառյանի (տե՛ս Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Եր., 1940, էջ 212): Գ. Ջահուկյանը նշված օրինակները դուրս է թողնում քարթվելական լեզուներից հայերենի կատարած փոխառությունների ցանկից՝ համարելով ոչ վստահելի (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 592):

¹⁵ Լատիներեն *d* - հայերեն *η* անմիջական փոխառության օրինակ հայտնի չէ: Հայերենում պահպանված *դենար* և *լաւղիկ* բառերը, ըստ Գ. Ջահուկյանի, միջնորդված փոխառություններ են հունարենից, ուստի համեմատությունների համար դրանք հուսալի չեն համարվում (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 618, 631):

շարձանները վկայություններ են պարունակում մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբների (XVIII) խեթական պետական կազմավորումների, հետևաբար նաև լեզվավիճակի մասին հասնելով մինչև մ.թ.ա. VIII դար¹⁶, երկրորդ, կազմավորման փուլում հայերենը տևական ժամանակ շփման մեջ պիտի լիներ այդ լեզուների հետ իբրև միևնույն տարածաշրջանի լեզու: Խեթալուվական լեզուների հետ հայերենի օրինաչափ (= համակարգային) հնչույթային համապատասխանությունները պարզելու տեսանկյունից դժվարություն կա այն առումով, որ այդ լեզուներից հայերենի կատարած փոխառությունների խիստ փոքր քանակը մի կողմից և հնչույթային համապատասխանությունների ոչ մեծ տարբերությունները, մյուս կողմից, միանշանակ եզրակացություն անելու հնարավորություն չեն տալիս: Անհամաչափ են նաև հպական բաղաձայնների՝ *h.-ե. նախալեզու-խեթալուվական լեզուներ* և *h.-ե. նախալեզու-հայերեն* հնչույթաբանական համակարգերը: Մի կողմից հին հայերենի հպականների եռակարգ (ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ) համակարգի դիմաց խեթալուվական լեզուներն ունեն երկկարգ համակարգ¹⁷, իսկ մյուս կողմից խեթալուվական լեզուների, մասնավորապես խեթերենի և հայերենի հպականների կարգերը համարժեք չեն իրենց հնչյունաբանական բնութագրերով: Մասնավորապես, խեթագիտության մեջ ընդունված պատկերացման համաձայն՝ հպականների այդ երկու կարգերը հնչույթաբանորեն հակադրվում են ոչ թե իբրև ձայնեղներ և խուլեր, այլ իբրև «նուրբեր»/«թուլյեր»/ (tenuis) և «միջիններ» /«ուժեղներ»/ (media)¹⁸, որոնց տարբերակիչ հատկանիշը *լարվածություն ~ ոչ լարվածություն* է¹⁹: Ըստ այդմ, հայերենի ձայնեղ հպականների դիմաց խեթերենը ունի ինչպես «թուլյ»/ձայնեղ-?/ (հմմտ. խեթ. *danđu-* «մահ» > *ղանդիոն* «գերեզմանային խավար» - *ճ>դ*, խեթ. *hinganijauar-* «զվարճություն, զվարթություն» > *հյ. հե(ն)զ(ն)* - *ց>զ*, այն-

¹⁶ Տե՛ս **Գ. Ա. Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան (այսուհետև՝ ՀԼՊՀԾ), Եր., 1961, էջ 147-148, **В. В. Иванов**, Хеттский язык. М., 1963, էջ 8-18, **А. Н. Савченко**. Сравнительная грамматика индоевропейских языков. М., 1974, էջ 29, **О. Семереньи**. Введение в сравнительное языкознание. М., 1980, էջ 24, **Գ. Բ. Ջահուկյան**, ՀԼՊՆԾ, էջ 311-312:

¹⁷ Տե՛ս **В. В. Иванов**. Хеттский ... , էջ 70-71, **А. А. Королев**. Хетто-лувийские языки // Языки Азии и Африки, т. I, М., 1976, էջ 16-18: Ի դեպ, դա նույնպես կարող է համարվել ընդհանուրհնդեվրոպական լեզվի հպական բաղաձայնների երկկարգ՝ *ձայնեղ-խուլ*, հնչույթային համակարգի անուղղակի վկայություն այն առումով, որ, լինելով ընդհանուրհնդեվրոպական լեզվավիճակից ամենից վաղ անջատված լեզուն կամ դրանցից մեկը, խեթերենը պիտի որ ավելի լավ պահպանած լիներ նախալեզվի հնչույթային համակարգը, այդ թվում՝ հպականների:

¹⁸ Հմմտ. «tenuis-ի և media-ի գրությունը առաջացնում է միանգամայն կամայական տպավորություն. որքանով կարելի է դատել, d և t, b և p, g, k և q գործածվում են փոխնիփոխ» (**И. Фридрих**. Краткая грамматика хеттского языка. М., 1952, с. 48):

¹⁹ Տե՛ս **В. В. Иванов**, նշվ. աշխ., էջ 71, **А. А. Королев**, նշվ. աշխ., էջ 17, ծնթգր. 6: Վյաչ. Իվանովը չի բացատրել, որ խեթերենի p, t, k («թուլյ») և pp, tt, kk կրկնակ («ուժեղ») հպականները կարող էին հակադրվել նաև *ձայնեղություն ~ խլություն* հատկանիշով, այսինքն՝ p = [b], t = [d], k = [g] և pp = [p], tt = [t], kk = [k], բայց այդպիսի մեկնությունը քիչ հավանական է համարել (տե՛ս **В. В. Иванов**, նշվ. աշխ., էջ 71, ծնթգր. 6):

պես էլ՝ «ուժեղ»/խուլ-?/ հպականներ (հմմտ. իւեթ. *ɟurut*- «կավ»> հյ. քրուտ «խեցեգործ, կավագործ» - *p>p*, իւեթ. *kurka*- «ծածկոց» (?)>հյ. *ɑpɾɑ* - *k>q*, իւեթ. *kušduɟāi* «կշտամբել, նախատել, գրպարտել»>հյ. կշտամբել - *d>u*, *u>p*): Հնչոյթային համապատասխանությունների հարաբերակցությունը չի փոխվում նաև կասկածելի համարվող զուգադիպությունները հաշվի առնելու դեպքում²⁰:

Ձայնեղ հպականների *h.-ե. նախալեզու-հայերեն* հնչոյթային համապատասխանությունների մեջ թվացյալ շեղում է **u>q* (*g*) անցումը: Համակարգային մոտեցման համաձայն այս դեպքում ևս պիտի գերակայեր **G^(h) ≡ (*g^h/g)>q(g)*-ն, այնինչ գերակայող է **u>q* (71) անցումը, իսկ **G^(h)>q* համապատասխանությունն է 22 (հմմտ. **g^h>q* (20), **g>q* (2)) կամ 28, եթե դրանց ավելացվի նաև **g^h>q* (6)-ն: **U>q*-ն շուրջ երկու անգամ գերազանցում է մյուս բոլոր համապատասխանությունները միասին վերցրած (հմմտ. **g^h>q* (20), **g^hh>q* (6), **k>q* (3), **k^h>q* (5), **g>q* (2), ընդամենը 36): Եթե միանգամայն օրինաչափ է, որ *h.-ե.* շրթնային **u* կիսաձայնը հին հայերենի շրթնային *ι* (*u*) ձայնորդի նախաձևն է²¹, ապա առնվազն բացատրության կարիք ունի այն, որ **u*-ն կարող էր լինել նաև հետնաքմային *q*-ի հիմնական նախաձևը: Այդ առումով կարևոր է, մի կողմից, **u* - **G^(h)* առնչությունների, իսկ մյուս կողմից՝ դրանցից յուրաքանչյուրի հյ. *q*-ի հետ ունեցած առնչությունների պարզաբանումը:

U>q* անցումը բացատրելու համար պիտի նկատի ունենալ հետևյալ իրողությունները. 1) հյ. *F(b)* և *ɳ(d)* ձայնեղ հպականների հիմնական նախաձևերն են, համապատասխանաբար, *h.-ե.* **B^(h)* (b^h/b*) և **D^(h)* (**d^h/d*) հպական ձայնեղները, այլ կերպ *h.-ե.* շրթնային և ստամային ձայնեղ հպականները՝ իրենց շնչեղ և ոչ շնչեղ տարբերակներով, 2) թեպետև **G^(h)>q* անցումը քանակական ցուցիչով շուրջ երկուսուկես անգամ զիջում է **u>q*-ին (28-ը (ներառյալ **g^hh>q*)՝ 71-ի դիմաց), բայց և այնպես այդ ցուցանիշը չի կարող դասվել պատահական զուգադիպումների կամ շեղումների շարքին, 3) առնվազն ընդհանուրինդեվրոպական փուլում, հետնաքմայինների (*велярные*) և քմայինների (*палатальные*) շարքերից բացի, համեմատաբանները տարբերակում են նաև շրթնահետնաքմայինների (*лабиовелярные*) շարք (հմմտ. **g^hh*, **g^h*, *(*k^hh)*, **k^h*)²², որը էական նշանակություն ունի *{*u//*G^(h)}*>հյ. *q* հարա-

²⁰ Տե՛ս **Գ. Ա. Ղափանցյան**, ՀԼՊՀՇ, էջ 149-154, **Գ. Բ. Ջահուկյան**, ՀԼՊԼՇ, էջ 316-321:

²¹ Տե՛ս **Վարդան Պետրոսյան**, Հին հայերենի *ι*(*u*) ձայնորդի տարածամանակյա և համաժամանակյա բնութագրերը, էջ 16-18:

²² Ընդհանուրինդեվրոպական փուլում շրթնահետնաքմային հնչոյթների կարգի գոյությունը, երիտբերականների ժամանակներից սկսած, ընդունում են համեմատաբաններից շատերը, անկախ այն բանից, թե ինչ հայեցակարգի են հետևում *h.-ե.* հպականների ըմբռնման հարցում (տե՛ս **Ա. Мейе**, Введение в сравнительное изучение в индоевропейских языков, М., 1938, М.-Л., էջ 111-116, **Հ. Աճառյան**, ԼՔՀԼ, հ. 6, էջ 526-529, 54-543, **Ա. Н. Савченко**, նշվ. աշխ., էջ 61-71, **Օ. Семереньи**, նշվ. աշխ., էջ 74-83, **Գ. Բ. Ջահուկյան**, ՀԼՊԼՇ, էջ 37-38, **Майрхофер М.** Индоевропейская грамматика. Т. 2. Фонетика // "Новое в зарубежной лингвистике" (սլոնիեւսն НЗЛ), вып. XXI. М.: «Прогресс», 1988, էջ 122-145, **Одри Ж.** Индоевропейский язык // НЗЛ, вып. XXI, էջ 28-30, **К. Г. Красухин**. Введение в индоевропейское языкознание. М., 2004, էջ 44-47 նն):

բերություններում: Նշված իրողությունները հիմք են տալիս ասելու, որ ա) հայերենի *g*-ի անմիջական նախաձևը, որից այն կարող էր սերել, պիտի լիներ հպական բաղաձայն, հետևաբար $*u > g$ անցումը ունեցել է միջանկյալ օղակ կամ օղակներ, 2) պիտի ենթադրել, որ գործել են հետևյալ անցումային փուլերը. 1) շրթնային արտաբերություն ունեցող $*u(w)$ ձայնորդը ձգտել է հետնաքմային արտաբերության վերածվելով շրթնահետնաքմային ձայնեղ g^u հպականի (հմմտ. $*u \rightarrow *u^s/(*l^q) \rightarrow *g^u(*q^l)$), 2) մի կողմից՝ հետնալեզվային, մյուս կողմից՝ շրթնային արտաբերության համադրությունը հնչյունին կարող էր հավելել հագագային (կոկորդային) երանգ (հմմտ. $*g^u(*q^l) + h \rightarrow *g^{u[h]}(*q^{l[h]})$), որը, սակայն, կարող էր պայմանավորված լինել դիրքային արտաբերությամբ, հետևաբար չուներ հնչույթաբանական արժեք, 3) այնուհետև շրթնահետնաքմային (շնչեղ/ոչ շնչեղ) հպականը, գրկվելով շրթնային և շնչեղ արտաբերություններից, վերածվել է ոչ շնչեղ հետնաքմային հպականի՝ $*q(g)^{23}$: Որ *h*-*ե*. $*u > hj$. $q(g)$ անցումը կարող էր ունենալ շրթնահետնաքմային $*g^u$ -ով միջանկյալ աստիճան, կարող է վկայել *h*-*ե*. $*u(*w) >$ կիմր. $gw/g^w - ?/^{24}$ տիպաբանական զուգահեռը: Այդ գործընթացները տևել են բավականին երկար՝ մեկ հազարամյակից ոչ պակաս, ընթացել են տարբեր գործոնների ազդեցությամբ և ավարտվել են, թերևս, նախքան *հնագույն հայերենի վաղ* ենթաշրջանը (մ.թ.ա. XII դ. – մ.թ.ա. IV դ.)²⁵, որովհետև խեթալուվական, իրանական և սեմական լեզուներից հայերենի կատարած փոխառություններում (իսկ դրանք մեզ հայտնի հնագույն փոխառություններն են) $u > q$ (*g*) հնչյունափոխություն չի հանդիպում: Հնչյունափոխական գործընթացները խթանող կամ դրանց վրա ազդող գործոնների թվում կարող էին լինել ինչպես արտաբերության «նվազագույն ճիգը», այնպես էլ «խնայողության սկզբունքը»²⁶, բայց ամբողջ գործընթացը հնարավոր չէ բացատրել միայն այդ երևույթներով, որովհետև այն ներառել է նաև նշված սկզբունքներին հակառակ, այն է՝ հնչարտաբերության քանակական, դրանով պայմանավորված նաև որակական բարդացման միտումներ, որպիսին կարող է համարվել հենց գործընթացի առաջին փուլը ($*u \rightarrow *u^s/(*l^q)$)²⁷:

²³ Այդ ժամանակագրությունը սահմանելու համար մեզ հիմք են տալիս, մասնավորապես, խեթերենից հայերենի կատարած փոխառությունները, որոնք պիտի տեղի ունենային առնվազն մինչև մ.թ.ա. VII դարը (հմմտ. խեթ. *hinganiiuar* - «զվարճություն, ուրախություն» - *hj*. *he(u)q(u)* «ծաղր, հեճուկ», խեթ. *parḡu* - (*hq(u)*. *hḡ. parḡav-eš*) - *hj*. բարձրագույն «պանծալի, փառավոր, ծաղկյալ», ըստ **Գրիգոր Ղափանցյան**, *ՀԼՊՀԵ*, էջ 150-151):

²⁴ *Գիմրերեն* կամ *վայիերեն*՝ կելտական ճյուղի բրիտական ենթաճյուղի լեզու (տե՛ս **Գ. Լյուս** և **Մ. Սեմերեն**. *Краткая сравнительная грамматика кельтских языков*. М., 1954, էջ 36, **Օ. Սեմերեն**, նշվ. աշխ., էջ 55):

²⁵ Ըստ **Գ. Ջահուկյանի** շրջանաբաժանման (տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, *ՀԼՊՀԵ*, էջ 25):

²⁶ Տե՛ս **Վարդան Պետրոսյան**, «Խնայողության սկզբունքը» և տարածամանակյա հնչույթաբանության հարցերը // *Բանբեր Երևանի համալսարանի*. Բանասիրություն, 2017, № 1(22), էջ 25-37:

²⁷ Ն. Պեդերսընը «գարտուղութիւն» է համարել *h*-*ե*. *v* (իմա՝ *u*) > *hj*. $q(g)$ համապատասխանությունը հնարավոր նկատելով «*u* : *yu* : *gu* : *q*» անցումները (տե՛ս **Հովհեր Պեդերսըն**, *Հայերեն եւ դրացի լեզուները*, էջ 12):

Ըստ իս՝ վերոշարադրյալից հետևում է, որ, չնայած քանակական զգալի գերակշռությանը, հ.-ե. *u-ն չի կարող համարվել հյ. g-ի բուն նախաձևը: Ինչպես որ p (b) և q (d) ձայնեղ հպականների նախաձևերը հ.-ե. *B^(h) և *D^(h) ձայնեղ հպականներն էին, q (g)-ի նախնական ձևն էլ եղել է հ.-ե. *G^(h) հպական ձայնեղը: Բսկ հ.-ե. *u-ի դիմաց հայերենում q(g) ունեցող բառերը՝ թվով 71, ըստ ամենայնի, ընդհանուրհնդեվրոպական լեզվի տրոհման փուլում և դրանից հետո՝ տևական շրջան դեռևս պահպանել էին այդ շրթնային հնչյունը, և միայն հետագայում՝ հայերենի՝ որպես ինքնուրույն լեզու կազմավորման ընթացքում, աստիճանական բարեշրջման ճանապարհով շրթնային *u-ն վերածեցին հետնալեզվային q(g) -ի: Կարծում ենք՝ այդ են վկայում ցեղակից լեզուների տվյալները, որոնցում հ.-ե. *u-ն ներկայացված էր համապատասխան ձայնավորով՝ u, կիսաձայն y ձայնորդով, շրթնատամնային v բաղաձայնով, կամ էլ դեռևս պահպանել էին հ.-ե. շրթնային ձայնորդը՝ w (հմմտ. հ.-ե. *ou- [*eu]. լատ. ind-uō «հագնել», լիտվ. auni, ay'ti «կոշիկ հագնել» - հյ. *uqan̄hul* «հագնել», - հ.-ե. *uṛs̄i- ? «ջուր, անձրև, գետ». հինդկ. var, vari «ջուր», ալբ. *hur-dhe* «ջրափոս, ճահիճ», լատ. *urina* «մեզ», հն իռլ. vari «հեղուկ, ջուր» - հյ. *quyn* «ցելս, տիղմ, աղբ», - *uḷk^u- «գայլ». հն հնդկ. *vṛka-*, լիտվ. *vilkas*, հն սլավ. *vlīkŭ*, գոթ. *wulfs*, լատ. *lupus*, հուն. *λύκος* (<*wluk^wos)²⁸ - հյ. *quyl*, - հ.-ե. *uel-mṛ /wīnā/²⁹ «մազ, բուրդ». հինդկ. *ūrṇā*, լիտվ. *vilna*, հն ու. *вълна*, գոթ. *wulla*, ավեստ. *varōnā*, - հյ. *qetṛn̄* «բուրդ, գեղմ»): Որոշ դեպքերում էլ այդ հնչյունը պարզապես ընկել է (հմմտ. հ.-ե. *uīnā - լատ. *lana*, հուն. *λάνος* / λήνος «բուրդ»):

Շրթնային u (w) ձայնորդը, i (y) ձայնորդի և կոկորդային h-ի հետ միասին, դասվում է «ոչ կայուն» հնչյունների շարքին, որոնք ամենից հաճախ են ընկել կամ հնչյունափոխության ենթարկվել ոչ միայն հնդեվրոպական, այլև ուրիշ լեզվաընտանիքների (օրինակ՝ ուգրաֆիննական) լեզուներում³⁰: Ուստի միանգամայն օրինաչափ պիտի համարել նաև հայերենում նրա կրած փոփոխությունը:

Վերոշարադրյալը հիմք է տալիս ասելու, որ՝ 1) հին հայերենի ձայնեղ հպականները հ.-ե. ձայնեղ հպականների արտացոլումներն են. 2) ինչպես ընդհանուրհնդեվրոպականում, այնպես էլ հին հայերենում ձայնեղ հպականների շնչեղությունը միայն հնչյունաբանական հատկանիշ էր, հետևաբար չի կարող խոսք լինել «բաղաձայնական տեղաշարժի» մասին, որովհետև, ըստ էության, հպականների՝ մեկ շարքից մյուսը, օր.՝ շնչեղից դեպի ոչ շնչեղը, անցումներ տեղի չեն ունեցել. 3) թեպետև հայերենի ձայնեղ հպականներից յուրաքանչյուրին

²⁸ Ըստ՝ **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 76:

²⁹ Երկրորդ նախաձևը տե՛ս **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 61:

³⁰ Տե՛ս **Серебренников Б. А.** Вероятностные обоснования в компаративистике. М., 1974, էջ 92-97:

համապատասխանում է հ.-ե. մի քանի հնչույթ (միջինը՝ 4-5), նրանցից միայն մեկն է հայերենի հնչույթի բուն նախաձևը. այդ հնչույթը հ.-ե. համապատասխան ձայնեղ հպականն է, այն է՝ *B^(h) (>Բ^[h]), *G^(h) (>Գ^[h]), *D^(h) (>Դ^[h]). դա է վկայում ինչպես համապատասխանությունների քանակական հարաբերակցությունը, այնպես էլ ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառությունների տիպաբանությունը. 4) Չնայած որ հ.-ե. *u > hj. q(g) համապատասխանությունը քանակական ցուցիչով շուրջ երկուսուկես անգամ գերազանցում է *G^(h)>q(g) համապատասխանությանը, բայց և այնպես, առաջինը ավելի ուշ ժամանակների, թերևս՝ *վաղ հնագույն հայերենի* շրջանի երևույթ է և, ըստ ամենայնի, պայմանավորված է ինչպես այդ շրթնային հնչյունի թույլ բնույթով, այնպես էլ՝ հպականի վերածվելու միտումով:

Բանալի բառեր – *տարածամանկյա հայեցակետ, պատմահամեմատական հայերենագիտություն, «բաղաձայնական տեղաշարժ», տիպաբանական գուգահեռ, ոչ կայուն հնչյուն*

ВАРДАН ПЕТРОСЯН – Диакроническая характеристика древнеармянских звонких смычных. – По сути древнеармянские звонкие смычные являются прямым отражением (рефлексами) соответствующих индоевропейских фонем (ср. *B^(h)>Բ^[h], *G^(h)>Գ^[h], *D^(h)>Դ^[h]), следовательно, в случае со звонкими смычными о передвижении согласных не может быть и речи. Несмотря на соответствие индоевропейскому, значительный количественный перевес *u>hj. q(g) по отношению к переходу *G^(h)>q(g), по всей вероятности, появился сравнительно позже и мог быть вызван слабым характером губного u, что как в индоевропейских, так и других языковых системах (например, угро-финских языках) привело либо к чередованию звуков, либо к исчезновению этой фонемы, как это произошло в современном армянском.

Ключевые слова: *диакронический аспект, сравнительно-историческое арменоведение, «передвижение согласных», типологическая параллель, неустойчивая фонема*

VARDAN PETROSYAN – The Diachronic Nature of Old Armenian Voiced Occlusives. – Old Armenian voiced occlusives are, as a matter of fact, the direct reflections of the corresponding Indo-European phonemes (comp. *B^(h) >Բ^[h], *G^(h)>Գ^[h], *D^(h)>Դ^[h]). Hence, one cannot speak of any “consonant shift” at least for voiced occlusives. Despite the considerable quantitative supremacy of the Indo-European *u>Arm. q(g) correspondence with G^(h)>q(g), the former must have developed comparatively later and can be explained by the weak nature of the labial u, which, in Indo-European languages, as well as in other systems, e.g. in Finno-Ugric languages, led to either a sound change of that phoneme or its disappearance as in Modern Armenian.

Key words: *diachronic concept, historical comparative Armenology, “consonant shift”, typological parallels, unstable sound*

Ներկայացվել է՝ 18.01.2019, գրախոսվել է՝ 15.02.2019, ընդունվել է տպագրության՝ 07.03.2019